ՈՒՇԱԳՐԱՎ ԷՋԵՐ ԱՐՑԱԽԻ ԳՐՉԱԳՐՈՒԹՅԱՆ, ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԴԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1700-1736 թթ.)

Մ.Գ. Հարությունյան, *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ*

Սույն պատմափուլը հայ ժողովրդի պատմության մեջ բնութագրվում է բարդ և ծանր փորձություններով լի ժամանակաշրջան[1]: Սույն ժամանակաշրջանի և, ընդհանրապես, տարբեր պատմական փուլերի հայկական արվեստի ճյուղերի ուսումնասիրությունը, հատկապես, կարևորվում է նրանով, որ հայկական մշակութային այդ արժեքների ներկայացումը (իրավական և պատմական առումով) հանդիսանում է կարևոր փաստ՝ հերքելու պարսիկ, ադրբեջանցի, թուրք, երբեմն՝ այլ երկրների ուսումնասիրողների այն վարկածները, որ Արցախի բազմաթիվ մշակութային արժեքները (հատկապես՝ Արցախի հյուսիսային հատվածի, որը հետագայում բռնազավթել է Ադրբեջանը) պատկանում են որևէ օտարի արժեքային համակարգին: Դրանք ստեղծվել են պատմական Արցախում՝ հայ մշակույթի անխոնջ ներկայացուցիչների կողմից, և, անշուշտ, համարվում են հայկական: Ներկայումս այդ արվեստի նմուշներից մի քանիսն ադրբեջանցի ուսումնասիրողները դիտարկում են որպես իրենցը, որը շատ սխալ կարծրատիպ է ադրբեջանական պատմագրության մեջ:

Հոդվածում անդրադառնում ենք հայկական արվեստի ճյուղերից գրչագրությանը, մանրանկարչությանն ու զարդարվեստին:

Գրչագրության կամ գրչության արվեստ: Գրչագրությունը (գրելու արվեստ է և ուսմունք գրության մասին)՝ որպես արվեստի մի ճյուղ, ստեղծվել է հին աշխարհում, և լայնորեն տարածված է եղել միջնադարում: Ինչպես նշում է Գ. Հովսեփյանը, գրչության արվեստն այն աշխատանքն է, որ դարերի ընթացքում կատարել են մեր ձեռագրական մշակույթի ներկայացուցիչները [2]:

Միջին դարերում եղել են գրչությամբ զբաղվող և նրա մեջ մասնագիտացած հատուկ անձինք, որոնք կոչվել են «գրիչներ»: Գրիչներն իրենց, գրառումների մեջ, անվանում են «գծող», «ծաղկող», «մրող» և այլ անուններով[3]: Գրիչները, ձեռագրեր ընդօրինակելուց բացի, տեքստերի վերջում թողել են գրառումներ (հիշատակարաններ, հիշատակագրություններ), որոնցում նշել են արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության, հանգամանքների գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և այլ հիմնահարցերի մասին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում շարունակում էին գործել դեռևս միջնադարում ձևավորված հայկական գրչության կենտրոնները: Նրանց զուգահեռ բացվեցին նորերը: Արցախում հայտնի են՝ Գանձասարի (XIII)[4], Դադի վանքի (նաև՝ Դադոյի, Սբ. Աստվածածին Կաթողիկե եկեղեցին՝ XIII), Խաթրավանքի (նաև՝ Խադարի, Խադայի կամ Խադոյի), Գտչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տող-գլխավոր եկեղեցին՝ XIII), Ս. Հակոբի (Խաչեն գետի աջ ափին, XVII դարում վերանորոգվել է), Ս. Ստեփանոսի (Ասկերանի

[1] 16-րդ դարի սկզբներին սկսված թուրք-պարսկական բախումներն ավարտվեցին 1639թ. Կասր ի Շիրինի (Կասրե-Շիրին) հաշտության պայմանագրով: Հայաստանը կրկին երկատվեց. Պարսկաստանին անցան Հայաստանի արևելյան նահանգները՝ Գուգարքը, Շիրակը, Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշտը, Սյունիքն ու Արցախը, Վասպուրականի արևելյան հատվածը: Իսկ Օսմանյան Թուրքիային՝ Հայաստանի արևմտյան տարածքները:
[2] Մանրամասն տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951:
[3] Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 301:
[4] Տե՛ս Ց. Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Եր., 1971, էջ 82:

շրջան՝ XVIդ.), Սպիտակ Խաչ վանքի[5], Ս. Հարությունի (Հադրութի շրջան-XVIդ.), Շոշ գյուղի Ս. Ստեփանոսի (1655թ.), Ս. Գևորգի (Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում, 1671թ.)[6], Ս. Աստվածածնի (Մարտակերտի շրջանի Կուսապատ[7] գյուղում, 1686թ.,) Երից Մանկանց վանքի (Մարտակերտի շրջան, Ջրաբերդի մոտ, Թարթառի վտակ Թրղի գետակի ափին գտնվող եկեղեցին, 1691թ.)[8], Ջրակույս գյուղի Ս. Ստեփանոսի (Հադրութի շրջան՝ 1698թ)[9], Սուլթանեցիք, Շատախ, Սարդարի թալա գյուղերի, Շամքորի, Խաչբուլաղի եկեղեցու (1710 թ.[10]) և այլ գրչության կենտրոններ: Սակայն, վերոնշյալ գրչատներում 1700-1736 թթ. գրված ձեռագրերից շատ քչերն են հասել մեզ: Հայ ժողովուրդը, իր ստեղծած ձեռագիր մատյանները թշնամիների ասպատակումների հետևանքով ոչնչացումից փրկելու համար, հաճախ դրանք թաքցրել էր աննպաստ պայմաններում, որն էլ պատճառ էր դարձել բազմաթիվ ձեռաքիր գրքերի անդարձ կորուստների, մագաղաթե, թղթե, կաշվե և մետաղյա կազմերի քայքայմանը: Փրկված ձեռագրերից մի քանիսը ներկայումս պահվում են Հայաստանի Հանրապետության Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

N 9088-ի ներքո պահվող ձեռագիր մատյանը գրվել էր Սարդարի թալա գյուղում (Ջական[11] գավառում): Այստեղ 1703 թ. գրիչ Արիստակես երեցի կողմից օրինակվել է դեռևս միջնադարում (14-րդ դարի վերջ և 15-րդ դարի սկիզբ) Գրիգոր Խլաթեցու (Ծերենց) խմբագրությամբ ձեռագիրը՝ «Հայսմաւուրք»-ը[12] (թերթ՝ 495, երկսյուն, բոլորգիր): Ստացողները եղել են Եսային, Ոսկան տանուտերը և Մելքումը:

Հաջորդ ձեռագիրը պահվում է Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերում [13]: Այն գրվել է 1707թ. Շատախում (Գանձակ) գրիչ սարկավագ Ստեփանոսի կողմից: Ստացողը եղել է Արոն:

N 5143-ի ներքո գտնվող ձեռագիր մատյանը կոչվում է «Ավետարան»[14] (թերթ՝ 303, երկսյուն, բոլորգիր): Վերջինս գրվել է 1708 թ. Շատախում՝ գրիչ, ծաղկող, կազմող Ստեփանոս սարկավագի կողմից: Ստացողը եղել է տանուտեր Այգի Շատախեցին:

N 3813 ներքո գտնվող ձեռագիրը՝ «Հայսմաւուրք»-ը[15] (թերթ՝ 497, երկսյուն, բոլորգիր) գրվել էր Սուլթանեցիք գյուղում (նաև՝ Սուլտանե, գտնվում է պատմական Գարդման գավառում, ներկայումս՝ Ադրբեջանի հանրապետության Գետաբեկի շրջանում), Սարգիս և Վարդան գրիչների կողմից, 1709 թ.: Ստացողը եղել է Սարգիսը: Ձեռագրում արտացոլվել են հայ ժողովրդի պատմությունից առանձին դրվագներ: Ուշագրավ են ձեռագրի էջ 7-ում ներկայացված տեղեկությունները քրիստոնյաների՝ Հռիփսիմյան կույսերի մասին: Նշվում է, որ հայոց թագավոր Տրդատ Մեծն (սկզբնական շրջանում) իր անհավատության և Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապում բանտարկելու պատճառով վարազի կերպարանք էր ընդունել. «…Գրիգոր յորժամ ելի Վիրապէն եւ եկն ի Վաղարշապատ քաղաք: Ամփոփեաց զնաշխարհս սբ. կուսանացն Հռիփսիմեանց եւ սկսաւ ուսուցանել զբանն կենաց ժողովրդեանն: … Եւ թագաւորն Տրդատ

[5] Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), Եր., 1982, էջ 187:
[6] Նույն տեղում, էջ 90:
[7] Տե՛ս Ս. Ջալալյան, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Տփղիս, 1848, էջ 180:
[8] Տե՛ս Խաչիկ Ծ. վարդապետ Դատեան, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2007, էջ 35:
[9] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 172:
[10]Խաչբուլաղ անունը թարգմանվում է Խաչաղբյուր: Անվան ծագումնաբանությունը կապվում է համանուն աղբյուրի հետ: Տեղադրված է Արցախի հյուսիսային հատվածում: Ներկայումս՝ Ադրբեջանի Հանրապետության սահմանում: Տե՛ս Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, Եր., 2004, էջ 233:
[11]Տեղադրված է Շամքոր գետակի ձախ, Կուր և Աղստև գետերի աջ ափերի և դաշտաբերանի մեջ: Երբեմն պատկանում էր պատմական Ուտիք նահանգին: Դասվում է Արցախի դաշտային կամ ստորին գավառների թվին: Ավելի ուշ՝ գավառի արևելյան կողմը սկսեց կոչվել Շամքոր, արևմտյան կողմը՝ Ղազախ, իսկ միջավայրը՝ Ջական անուններով: Տե՛ս Մ. Բարխուդարյան, Արցախ, Եր., 1996, էջ 15:
[12] Տե՛ս ՄՄ, ձեռ. N 9088:
[13] Տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, Բանբեր Մատենադարանի,1980, N 13, էջ 299:
[14]Տե՛ս ՄՄ, ձեռ. N 5143:
[15] Տե՛ս ՄՄ, ձեռ. N 3813:

խոզակերպ ձեւովն անկեալ կայր առյոտս նորա զաւուրս կեսգիշերին ելանելոյ՝ի Վիրապէն ետես տեսիլ ահեղ եւ զարմանալի[16]…»: Ներկայացվում է նաև հայոց թագավորի՝ նախկին կերպարին վերադառնալու համար բժշկության հիմնական ճանապարհը. այն է՝ Խոր Վիրապի վանքից պետք է ազատ արձակել Գրիգոր Լուսավորչին[17]: Ձեռագրում ներկայացվում է սբ. Մարիամ Աստվածածնի առաքելության, հրեշտակապետ Գաբրիելի, ավետարանիչ Հովհաննեսի[18], Հռոմի Դիոկղետիանոս կայսեր կամայականությունների, հատկապես քրիստոնյաներին հալածելու, բժիշկ Դոմեդիոսի գործած հրաշքների (բժշկության բնագավառում) մասին: Վերջինիս ջանքերի շնորհիվ մեծ թվով հիվանդներ են բուժվել (խոսքը վերաբերում է հատկապես Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից փրկվածներին): Վերջինս իր հիվանդներին միշտ հավաստիացնում էր. «…միշտ հավատարիմ մնալ քրիստոնեական հավատքին[19]»: Հիշատակության արժանի են նաև պարսից Հազկերտ թագավորի օրոք քրիստոնյաների հալածանքների[20], Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեության տարածման, հեթանոսական տոների վերացման, քրիստոնեական տոների հաստատման[21], սբ. Թադեոս[22] և սբ. Բարդուղիմեոս[23] առաքյալների գործունեության, Սահակ Պարթևի[24], պարսից Շապուհ թագավորի ասպատակությունների[25], Հռոմի կայսր Հուստինիանոսի՝ հայերի նկատմամբ կատարած հալածանքների մասին տվյալները: Վերջինիս մասին նշվում է. «…Յուստիանոս կայսրն հայոց հալածեաց զազգս հայոց ուղղափառ հաւատ ոյս յիշանութե իւրմէ [26]…»:

Հետաքրքիր է Թադեոս առաքյալի աշակերտներից Եղիշե առաքյալի՝ Արցախ-Ուտիք աշխարհում (Աղվանից աշխարհում) ծավալած գործունեության մասին: Նշվում է նաև, որ նրա մասունքները պահվում են Արցախի Ջրվշտիկ կոչվող վանքում[27]:

Պատմվում է Հռոմի Հուլիանոս կայսեր՝ քրիստոնյաների նկատմամբ ցուցաբերած վատ վերաբերմունքի [28], Մեսրոպ Մաշտոցի՝ հայոց գրերի ստեղծման[29], սբ. Գրիգոր Նարեկացու[30], Սմբատ Բագրատունու[31] մասին:

Սուլթանեցիք գյուղում հայտնի է եղել նաև գրիչ Մխիթարը, որի ձեռքով գրվել են մի քանի ձեռագրեր[32]: Հայտնի է 1671 թ. Եվա և Ոսկան ամուսինների պատվերով գրված ձեռագիր մատյանը, որի վերջին ստացողը եղել է Մելիք Սարգիսը՝ 1729 թ.:

Ուշագրավ է Գալուստ Շերմազանյանի անձնական հավաքածուի մեջ (N 27) պահվող ձեռագիրը՝ «Գիրք աղօթից և տաղք»[33]: Այս ձեռագիրը գրվել էր Գանձասարում, 1713 թ.՝ գրիչ Յակոբ Երեցի կողմից:

[16] Նույն տեղում, թ. 7բ:
[17] Նույն տեղում, թ. 8ա:
[18] Նույն տեղում, թ. 8բ-9բ:
[19] Նույն տեղում, թ. 14բ:
[20] Նույն տեղում, թ. 16բ:
[21] Նույն տեղում, թ. 22ա:
[22] Նույն տեղում, թ. 24ա:
[23] Նույն տեղում, թ. 26ա:
[24] Նույն տեղում, թ. 41ա:
[25] Նույն տեղում, թ. 43բ:
[26] Նույն տեղում, թ. 49բ:
[27] Նույն տեղում, թ. 65բ-66ա:
[28] Նույն տեղում, թ. 89բ:
[29] Նույն տեղում, թ. 145բ:
[30] Նույն տեղում, թ. 248բ:
[31] Նույն տեղում, թ. 295 ա:
[32] Տե՛ս Ս. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 100-101:
[33] Տե՛ս Օ. Եգանյան, Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Էջմիածին, 1971, N 4, էջ 59:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում գրչության կենտրոն է եղել Շամքորը[34]: Այստեղ հայտնի է եղել գրիչ Սարգիս երեցի անունը, որի ձեռքով գրվել են մի քանի ձեռագիր մատյաններ: Մեզ հասած ձեռագրերից մեկը՝ «Ժողովածուն» (թերթ՝ 232, միասյուն, նոտրգիր), գրվել էր 1717 թ., որի ստացողը եղել է Մխիթար Աղճուղալեցին[35]: Բովանդակությունում հետաքրքիր են «Գրիգոր Նարեկացւոյ Մատեան ողբերգութեան», «Տեսիլ Բենկայ», «Աղոթք» (Բենիկ, Յովհ. Սարկավագ, Եփրեմ) խորագրերը կրող բաժինները: Հաջորդ ձեռագիր մատյանը՝ «Ժողովածու»-ն[36] (թերթ՝ 204, միասյուն, նոտրգիր), գրվել էր նույն գրիչ Սարգիս երեցի կողմից, 1721թ.: Ստացողը եղել է Առաքել Դանձուտցին: Բովանդակությունում ուշադրության արժանի են հետևյալ բաժինները՝ «Գրիգոր Նարեկացւոյ Մատեան ողբերգութեան», «Տեսիլ Բենկայ Վանանդեցւոյ», «Աղոթք» (Բենիկ Վանանդեցի, Յովհ. Սարկավագ, Եփրեմ Ասորի, Մովսես Քերթող, Յովհ. Գառնեցի անանունք), «Մաղթանք առ Ս. Աստուածածինն», «Մանունք»:

Մանրանկարչություն: Մանրանկարչությունը կատարվում է ձեռագիր մատյաններում, որոնք արժեքավոր տեղ են զբաղեցնում հայ ժողովրդի մշակույթի բազմադարյան պատմությունում: Այն ներառում է գրչագիր մատյաններում արված գծանկարներն ու գունանկարները և գրքերի ձևավորումը՝ անվանաթերթեր, խորաններ, լուսանցազարդեր, պատմողական թեմատիկ տեսարաններ և այլն: Վերջիններս պատկերազարդվել են գուաշով (ջրաներկի մի տեսակ), ջրաներկով, ոսկով, արծաթով:

Տարբեր դարաշրջաններում բազմաթիվ հայ մանրանկարչական կենտրոններ ու գրչոջախներ են ստեղծվել Հայաստանում և հայկական գաղթօջախներում (Ղրիմ, Իտալիա, Նոր Ջուղա, Կ. Պոլիս, Կաֆա և այլուր):

Մանրանկարչության կարևորագույն և ուշագրավ դրսևորումներից է մատենական գեղանկարչությունը: Վերջինս արտացոլվել է ձեռագիր մատյաններում (ձեռագիր գրքերում): Արցախում ստեղծված ձեռագիր գրքերը տարբեր հատկանիշներով նման են պատմական Հայաստանի մյուս նահանգներում՝ Սյունիքում, Գուգարքում, Այրարատում, Վասպուրականում, պատրաստված մատյաններին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում ստեղծագործող վարպետներն իրենց մանրանկարներում կիրառել են պարզ և դյուրին ըմբռնելի ձևեր: Նույն սկզբունքը պահպանվել է նաև մանրանկարների գունային ֆոնում: Հիմնականում մանրանկարներում օգտագործվել էին չորս կամ հինգ գույներ՝ կարմիր, կանաչ, կապույտ, մանուշակագույն, դեղին (ի դեպ նշենք, որ այդ գույների սկզբունքայնությունը եկել էր միջնադարից):

1700-1736 թթ. Արցախի մանրանկարչական արվեստում ուշագրավ են սյուժետային մանրանկարներն ու սրբերի դիմանկարները: XVIII դարի սկզբին բնորոշ մանրանկարները իրենց մեջ ամփոփել են տարբեր թեմատիկա: Իրենց հետաքրքրությամբ առանձնանում են «Ավետում», «Ծնունդ», «Սկրտություն», «12 առաքյալներ», «Հիսուսին տանջելը», «Խաչելություն», «Վերջին դատաստան», «Ավետարանիչ», «Անվանաթերթ Մատթեոսի», «Մարիամ Աստվածածին», «Կիսախորան», «Լուսանցազարդ», «Զարդագրեր», «Թռչնագրեր» և այլն:

Արցախի մանրանկարչական արվեստին առնչվող կարևոր նյութերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հարուստ հավաքածուներում: Նշենք դրանցից մի քանիսը. N 9088-ի ձեռագրի՝ «Հայսմաւուրք»-ի մանրանկարը հիմնականում «Լուսանցազարդ» է:

---

[34]Տեղադրված է Շամքոր գետակի ձախ ափին: Գտնվում էր պատմական Ուտի (Ուտի-առանձնակ) գավառում: Դասվում էր Արցախի դաշտային կամ ստորին գավառների թվին: Տե՛ս Մ. Բարխուդարյան Արցախ, էջ 37: Ներկայումս այն գտնվում է Ադրբեջանի հյուսիս-արևմտյան մասում:

[35] ՄՄ, ձեռ N 1574: Տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց, Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Եր., 1965, էջ 586:

[36]ՄՄ, ձեռ. N 7008: Տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Եր., 1970, էջ 440:

«Բանբեր Մատենադարանի» պարբերականում հիշատակվում է Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերում[37] պահվող մեկ ձեռագրի մասին, որն իր մեջ ամփոփում է տարբեր թեմատիկայով մանրանկարներ՝ «Կիպրիանոս և Ուստիանե», «Մարիամ Աստվածածին», «Գրիգոր Նարեկացի», «Հրեշտակապետներ», «Պողոս, Պետրոս», «Հիսուս», «Գևորգ Զորավար», «Ճակատագարդ» և այլն:

Իր ինքնատիպությամբ առանձնանում է N 5143-ի ներքո պահվող ձեռագիրը՝ «Ավետարան»-ը: Ծաղկողը եղել է Ստեփանոս սարկավագը, որի ձեռքով արվել են հետևյալ մանրանկարները՝ «Հիվանդներին բուժելը[38]», «Հիսուսին խաչելը[39]», «Տերունական», «Ավետարանիչ[40]», «Խորան[41]», «Կիսախորան[42]», «Լուսանցազարդ[43]»:

N 3813 ձեռագրի՝ «Հայսմաւուրք»-ի թեմատիկան իր մեջ ամփոփում է «կիսախորան[44]», «լուսանցազարդ[45]» մանրանկարներ:

XVIII դարի առաջին երկու տասնամյակներում ուշագրավ են N 1574, 7008 ձեռագրերի մանրանկարները: Երկու ձեռագրերի մանրանկարները եղել են «Կիսախորան» և «Լուսանցազարդ»:

Զարդարվեստ: Վերջինս համարվում է հայկական արվեստի հնագույն ճյուղերից մեկը, որը ձևավորվել էր դեռևս նախնադարում: Զարդարվեստի մոտիվները տարաբնույթ են: Ա. Մնացականյանը հանգամանորեն ներկայացնելով զարդարվեստի մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության հետ առնչվող հարցերի մեկնաբանությունը, նշում է, որ հնագույն ժամանակներից սկսած մարդիկ զարդարել են հագուստները, բնակարանները, տնային կահ-կարասիքը, գործիքները, մարդկային մարմինները, ձեռագրերն ու գրքերը, պատմաճարտարապետական զանազան հուշարձանները, գերեզմանաքարերը, նույնիսկ անասունների մարմինները, ծածկոցները և այլն[46]: Հայկական զարդարվեստում հիմնականում տարածված են բուսական և կենդանական մոտիվները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում ստեղծված զարդարվեստի նմուշներ են վերը նշված ձեռագրերում արված տարբեր զարդամոտիվները: Ձեռագրերի կազմերի վրա առկա են բազմաթիվ զարդաքանդակներ՝ կիսագնդիկներ, անկյունային և եզրային մետաղապատումներ, կողային պատվածքներ, արծաթյա խաչ, արծաթյա զարդաքանդակ, խաչելությամբ, Տիրամոր դիմաքանդակով և այլն:

Այսպես, N 3813 ձեռագրում առկա են բաց գույներով զարդանախշեր[47], զանգակատուն՝ խաչը գլխին[48], թռչուն[49], զարդանախշ՝ մեջը փոքր խաչ[50], մոմակալ[51], խաչ՝ պատվանդանի վրա[52], N 5143 ձեռագրում՝ թռչուն[53], զարդանախշ[54], տերև[55], ծաղիկ[56], ծառ[57] և այլն, N 9088

---

[37] Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, Բանբեր Մատենադարանի,1980, N 13, էջ 299:
[38] ՄՄ, ձեռ. 5143, թ. 5ա:
[39] Նույն տեղում, թ. 5բ:
[40] Նույն տեղում, թ. 15բ:
[41] Նույն տեղում, թ. 10բ, 11բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա:
[42] Նույն տեղում, թ. 16ա:
[43] Նույն տեղում, թ. 22ա, 23 բ, 24բ, 27ա, 28բ, 28բ, 33ա, 34բ, 35բ և այլն:
[44] Նույն տեղում, ձեռ. 3813, թ. 3ա:
[45] Նույն տեղում, թ. 267ա, 270ա, 271ա, 275ա, 276ա, 298ա, 305բ, 327բ, 331բ, 342ա, 375ա, 398ա, 426ա, 427ա, 427բ, 428բ, 450բ, 451ա, 451բ, 453բ:
[46] Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 7:
[47] ՄՄ, ձեռ. N 3813, թ. 5բ, 8բ, 72բ, 73բ, 75բ, 80բ, 82ա, 84ա, 85ա, 86ա, 87ա, 99ա, 100ա, 109ա, 115ա, 120ա, 122բ, 124բ, 132ա, 147բ, 150ա, 151բ, 155ա, 161բ, 170ա, 173բ, 203ա, 213բ, 267ա, 270ա, 271ա, 203ա, 213բ:
[48] Նույն տեղում, թ. 7բ:
[49] Նույն տեղում, թ. 157բ, 165ա, 185ա, 272ա, 361բ, 386բ, 399ա, 404 բ, 459ա:
[50] Նույն տեղում, թ. 183բ:
[51] Նույն տեղում, թ. 376ա, 379ա, 394ա, 435ա:
[52] Նույն տեղում, թ. 401բ:
[53] Նույն տեղում, ձեռ. N 5143, թ. 18ա, 40ա, 45ա, 53ա, 55ա:
[54] Նույն տեղում, թ. 19բ, 20ա, 22ա, 27ա, 28բ, 29բ:
[55] Նույն տեղում, թ. 46 ա:

ձեռագրում՝ զարդանախշ[58], եկեղեցու գմբեթ՝ խաչը գլխին[59], մոմակալ[60], խաչ պատվանդանի վրա[61] և այլն:

Ինչպես վերը նշվեց, զարդարվեստի մոտիվները արտացոլվել են նաև տապանաքարերի վրա: Քննարկվող ժամանակաշրջանում Արցախում զարդարվեստի գեղեցիկ նմուշ է Երեմիա կաթողիկոսի տապանաքարը: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայաձև զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Երեմիա կաթողիկոսին Աղուանից, յազգէն Ջալալ Դօլին»: ՌՃԽԹ: (1700) թուին[62]:

Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Մելքիսեթ եպիսկոպոսի եղբոր՝ Մեսրոբի (1713, Ջրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքում), մելիք Եգանի հոր՝ Գտչավանքի վանահայր Ղուկաս վարդապետի տապանաքարերը (Տող գյուղի սբ. Հովհաննես եկեղեցում): Վերջինիս վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան Մելիք Եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. թվին: ՌՃԿԴ: (1716)»[63]:

Գեղեցիկ քանդակներ են արվել մելիք Բեգի (նաև՝ Պեկի) կողակից Շայամինի[64] (Ծար-Ջառ գյուղի Սբ. Սարգիս կոչվող թաղածածկ մատուռի մերձակայքում, 1717, ԼՂՀ Քարվաճառի, նախկին՝Քյալբաջարի շրջան), Խոճա Եվրինի[65] (Հին Մոխրաթաղ գյուղում, 1720, Մարտակերտի շրջան), առաջաձորցի տեր Գրիգորի (1722), Մեսրոպ վարդապետի որդի տեր Սիմեոնի տապանաքարերի վրա: Վերջինիս վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմէոնի որդի Մեսրոպ վարդապտին. թուին ՌՃՀԲ (1723): Լուսահոգի մէլիք Եգանն ձեռնադրել տուաւ եպիսկոպոս, կարգեց Կտիչայ վանիցն առաջնորդ, որ եկի հաստատեցի սուրբ աթոռսն 'ի թուին հայոց ՌՃՂԶ -ին(1747) առ Աստուած փոխեցաւ. ով որ կարդայ մէկ բերան Աստուած ողորմի ասեն»[66]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նմանատիպ տապանաքարեր են տեղադրվել Գանձասարում (Միանաս վարդապետի, 1724), Հացի գյուղի մատուռում (Խմիշի որդու Սարգիսի, 1725 թ., ԼՂՀ Մարտունու շրջան):

Զարդարվեստի գեղեցիկ նմուշ է Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանցի տապանաքարը՝ 1728 թ.: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայաձև զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Եսաի կաթողիկոսին Աղուանից որ է ազգէն Ջալալ Դօլին: ՌՃՀԷ: (1728) թուին»[67]:

Հետաքրքիր զարդարվեստի մոտիվներ առկա են Մելիք Շահնազարի տապանաքարի վրա (Ավետարանոցում): Այն սպիտակավուն է: Տապանաքարի մեկ երեսին պատկերված է սազ նվագող, դիմացը՝ երեք պարողներ, երկու ֆիգուր. մեկի ձեռքին հայելանման իր, իսկ մյուսին՝ կենաց ծառ: Մյուս երեսին՝ երեք հեծյալ և մի թամքած ձի, որի պատկերված է թռչուն: Տապանաքարի վրա գրված արձանագրությունը օղակաձև է. «Այս է տապան մէլիք Շահնազարի որդի մէլիք Յիսէին, թվ:ՌՃՁԵ: (1736): Ոգեմ զբանս գովեսգի ի վերայ մելիք Հուսէյնի, զօր գրեցի այս

[56] Նույն տեղում, թ. 67ա:
[57] Նույն տեղում, թ. 70ա:
[58] Նույն տղում, ձեռ. N 9088, թ. 4բ, 6ա, 12ա, 15ա, 18բ և այլն:
[59] Նույն տեղում, թ. 5ա:
[60] Նույն տեղում, թ. 38բ:
[61] Նույն տեղում, թ. 43ա:
[62] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 65:
[63] Նույն տեղում, էջ 178:
[64] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 222:
[65] Նույն տեղում, էջ 94:
[66] Ս. Ջալալեանց, նշվ. աշխ., Մասն Բ, Տփխիս, 1858, էջ 258: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 185:
[67] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 64:

տապանի….»[68]:

Զարդարվեստի գեղեցիկ նմուշներ են Արցախում գործող եկեղեցիների և նրանց շրջակայքում կանգնեցրած խաչքարերի զարդաքանդակները:

Իրենց հետաքրքիր քանդակներով առանձնանում են Շոշ գյուղի սբ. Ստեփանոսի եկեղեցու[69] (1712), Գտչա (կանգնեցրվել է տողեցի Սարգսի որդի Սայունու և նրա կնոջ՝ Հերիքնազի կողմից, 1717 [70]), Ջրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքերի շրջակայքում (1728) տեղադրված խաչքարերը:

Резюме

Знаменательные страницы истории манускриптики, миниатюры и декоративного искусства Арцаха (1700-1736гг.)

М.Г. Арутюнян, *Институт истории НАН РА*

Таким образом, несмотря на трудный исторический период, искусство переписывания, миниатюрной живописи и украшения искусства продолжали развиваться в Арцахе в 1700-1736 гг.

Центры искусства переписывания в основном были сформированы в церквях; были известны церкви Св. Степанос (в районе Аскерана, XVII в.), Белый крест, Св. Арутюн (в районе Гадрута, XVII в.), Св. Степанос (в деревне Шош, 1655), Св. Георгий (в деревне Газанчи, в районе Мартакерта, 1671), Св. Аствацацин (в деревне Кусапат, в районе Мартакерта, 1686.), Ериц Манканц (в районе Мартакерта, 1691), Св. Степанос (в деревне Джракуйс, в районе Гадрута, 1698), а также церкви Султанецика, Шатаха, Сардар Тала, Шамхора и т. д.

Миниатюрная живопись (миниатюра) в основном была сделана в рукописях, которые хранятся в Матенадаране. Формы декоративного искусства были отражены в одежде, домах, инструментах, человеческих телах, рукописях, книгах, а также в различных исторических и архитектурных памятниках, могильных камнях.

Summary

Remarkable Pages of Artsakh Rewriting, Miniature Painting and Decoration Art History (1700-1736)

M.G. Harutyunyan, *Institute of History of NAS RA*

Thus, despite the difficult historical period, the art of rewriting, miniature painting and decoration art continued to develop in Artsakh in 1700-1736.

Centers of the art of rewriting were formed mainly in churches; there were churches of St. Stepanos (in Askeran region, XVII century), White Cross Monastery, St.Harutyun (in Hadrut region, XVII century), St. Stepanos (in Shosh, 1655), St. George (in Ghazanchi village of Martakert region, 1671), S. Astvatsatsin (in Kusapat village of Martakert region, 1686), Yerits Mankants monastery (in Martakert region, 1691), Stepanos (in Jrakuys village of Hadrut region, 1698), Sultanetsik church, Shatakh, Sardar Tala church, Shamkor and etc.

Miniature painting was mainly made in manuscripts, which are kept in Matenadaran. Forms of decoration art were reflected in the clothes, houses, tools, human bodies, manuscripts and books as well as in various historical and architectural monuments, gravestones.

[68] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Թիֆլիս, 1882, էջ 49: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 149:

[69] Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 146:

[70] Ս. Ջալալեանց,նշվ. աշխ., Մասն Բ, էջ 258: